

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

(1979 թ. հունվար—դեկտեմբեր)

ՔՈՒՂԱՐԻԱ

Պլուզդիվի հայ մշակութային տան սրահում կազմակերպվել է Ջատիկ Ղազարյանի դասախոսությունը՝ նվիրված հայ մեծ հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանի կյանքին ու գործունեությանը։ Վառնայում, տեղի «Երևան» կազմակերպության վարչության նախաձեռնությամբ, նույն թեմայով ղեկուցում է կարդացել Զավեն Տերտերյանը։

«Երևան», 2 մարտի, 15 դեկտեմբերի

Սոֆիայի «Նարոդնա կուլտուրա» հրատարակչությունը լույս է ընծայել Ալեքսանդր Շիրվանզադեի «Քառս» վեպը բուլղարերեն, Հակոբ Օրմանճյանի թարգմանությամբ (գրքում ղեկավարված է նաև ականավոր գրողի «Արտիստը»)։ Բուլղարիայում սա Շիրվանզադեի գործերը հրատարակելու առաջին փորձն է։ Հատորի առաջաբանում Հ. Օրմանճյանը համառոտ ներկայացնում է գրողի կյանքը և ստեղծագործությունները։ Գիրքը լույս է տեսել 25 հազար օրինակով։

«Երևան», 23 մարտի
«Նոր օր», 1 մայիսի

Բուլղարիայում շատերն են զբաղվել հայագիտությամբ։ Առավել աչքի ընկած գործերից են «Բառարան պուլկարերեն—հայերեն—տաճկերեն» (կազմող Ասատուր Մկրտչյան), «Հայ կեղծանուններու բառարան» (Ներսես Գասապյան) և այլն։

Սոֆիայի համալսարանում հայոց լեզվի հարցերով զբաղվում է ականավոր բուլղար լեզվաբան Վլադիմիր Գեորգիևը։ Համալսարանում արդեն տասներորդ տարին է, ինչ արևելագիտական ամբիոնին կից գործում է հայոց լեզվի դասընթացը, որտեղ հայ և բուլղար Լրիտասարդները բացի հայերենից ուսումնասիրում են հայ ժողովրդի պատմությունն ու մշակույթը։ 1978 թ. Սոֆիայի համալսարանը հրատարակել է է. Սելյանի «Հայոց լեզվի դասագիրքը»։

«Երևան», 10 նոյեմբերի

ՌՈՒՄԻՆԻԱ

Բուխարեստի Արվեստի թանգարանի սրահներում բացվել է նկարչության և քանդակա-

գործության ցուցահանդես, ուր հատուկ տեղ է հատկացված ռումինահայ քանդակագործուհի Յոհաննա Գասարճյանի և նկարիչ Երվանդ Նիկողոսյանի ստեղծագործություններին։

«Ջարթոնֆ», 21 ապրիլի

Ապրիլի 5-ին Յաշի համալսարանի բանագիտության կաճառի սրահում տեղի է ունեցել Ռումինիայի Արևելագիտության ընկերության Յաշի մասնաճյուղի նիստը՝ նախագահությամբ պրոֆ. դոկտ. Կ. Իվլենեսքուի։ Պրոֆ. դոկտ. Ֆլորինթա Թ. Քրեմփան այդ նիստում հանդես է եկել «Անանիա Շիրակացի. VII դարու հայ ուսողագետ» թեմայով դասախոսությամբ, որից հետևածներ են բերված «Նոր կյանք» թերթում։

«Նոր կյանք», 4 մայիսի

Բուխարեստի հայ համայնքի կողմից հունիսի 10-ին կազմակերպվել է հայ բանաստեղծությանը նվիրված հավաքույթ, ուր «Նոր կյանք» թերթի խմբագիր Սարգիս Սելյանը դասախոսել է հայ քնարերգության մասին։ Գեղարվեստական բաժնում կարդացվել են Ներսես Շնորհալու, Նաղաշ Հովնաթանի, Քուչակի, Սայաթ-Նովայի, Հովհաննես Թումանյանի և Եղիշե Չարենցի ստեղծագործությունները հայերեն և ռումիներեն թարգմանություններով։

«Նոր կյանք», 15 հունիսի
«Ջարթոնֆ», 27 հուլիսի

Լույս են տեսել արևելագետ Աուրել Տեչեյի աշխատությունները երկու հատորով։ Առաջինը կրում է «Օսմանյան կայսրության պատմությունը» (մինչև 1656 թ.) խորագիրը, իսկ երկրորդը՝ «Ռումեն-արևելյան հարաբերությունները»։ Վերջինիս մեջ է ղեկավարված հեղինակի՝ 1939-ին լույս տեսած «Ռումենները IX դարեն մինչև XIII դարը հայկական աղբյուրներու լույսին տակ» հոդվածը։

«Ապագա», 7 հուլիսի
«Ջարթոնֆ», 1 սեպտեմբերի

Բուխարեստում լույս է տեսել «Ռումենները Հռոմի դիվանաթուղթերուն մեջ» գիրքը Ծոն Տումիթրիու-Սնակովի աշխատասիրությամբ։ Հա-

տորը պարունակում է 148 վավերագրեր՝ լատիններեն բնագրով և ռումիներեն թարգմանությամբ, որոնք ընդգրկում են 1633—1794 թթ.: Այդ վավերաթղթերից շատերը գրվել են Գեուլայում (Արմենոպոլիս) և վերաբերում են այդ քաղաքի հայերին ու նրանց կացությանը: Վավերագրերից մեկը, որ գտնվում է Վիեննայի նվիրակության թղթածրարներում, վերաբերում է 1780 թ. հուլիսի 11-ի տեղեկագրությանը և կրում է «Թրանսիլվանիա բնակող հայերու կացության հակիրճ նկարագրություն» խորագիրը: Այս վավերագրում ի միջի այլոց ասված է. «Հայերը, որոնք ցարդ ցրված էին և կթափառեին անապահով բնակավայրեր, Օբսենտիոսի կողմն միատեղված և կայսեր շնորհած հիշյալ իրավասություններու հիման վրա սկսան շինել ոստաններ. առաջինը՝ Արմենոպոլիս (Կերլա), որ երևելի շենքերու մեծությամբ և շքեղությամբ, բայց մանավանդ իր ծխական եկեղեցիով, կրնա մրցիլ Թրանսիլվանիո մյուս քաղաքներուն հետ»:

«Շարժում», 26 հուլիսի

Բուխարեստի «Ալրատրոս» հրատարակչությունը ռումիներեն լույս է ընծայել «Հայկական առածներ և խոհեր» ժողովածուն, որը թարգմանել և կազմել է Սարգիս Սելյանը: Հատորը նկարազարդել է Մ. Շլուկյանը: Ժողովածուն ընդգրկում է շուրջ 1.200 առածներ, ասացվածքներ, ինչպես նաև հնագույն ժամանակներից մինչև մեր օրերի 80 հայ հեղինակների երկերից քաղված 800 ասույթներ:

«Նոր կյանք», 7 սեպտեմբերի

ՀԱՐԱՎՈՒՄԱՎԻՍ

Սկսվելում լույս է տեսել հայկական պատմվածքների ժողովածու, որում ղեկավարված են 15 սովետահայ գրողների պատմվածքներ: Թարգմանիչն է էֆթիմ Մաներ, առաջարանը գրել է Դավիթ Գասպարյանը:

«Աշխարհ», 1 սեպտեմբերի

ԼԻՔԱՆԱՆ

Բեյրութում լույս է տեսել հայ գրողների պատմվածքներն ընդգրկող ժողովածուի առաջին գիրքը (486 էջ) շքեղ հրատարակությամբ: Հատորը կազմել, ներածականը, գրողների կենսագրականները, բառարանն ու ծանոթագրությունները գրել է Վահե-Վահյանը: Գրքում ներկայացված են XIX դարի վերջի և XX դարի սկզբի արևմտահայ և արևելահայ 29 գրողների 61 պատմվածքներ: Հատորի ներածականում համառոտակի ներկայացված է հայ արձակի զարգացման սեղմ պատմությունը, գիրքը ձևավորված է ճաշակով, տրված են հեղինակների

դիմանկարները: Հրատարակիչն է Հ. Բ. Ը. Միության Ալեք Մանուկյան մշակութային հիմնադրամը:

«Արարատ», 19 հունվարի

«Նոր օր», 6 հուլիսի

ՀՈՒՆԱՍՏԱՆ

Աթենքում հիմնվել է «Արաքս» մշակութային միությունը, որը հայրենասեր կազմակերպություն է՝ կապված Մայր հայրենիքի և էջմիածնի Ամենայն հայոց կաթողիկոսության հետ: Միության նպատակն է հունահայ գաղութում լայնորեն տարածել հայոց պատմությունն ու մշակույթը, երիտասարդ սերնդին ներշնչել հայապահպանության գաղափարները: «Արաքս» մշակութային միության ատենապետն է Գ. Պղտիկյանը, ատենադպիրը՝ Հ. Ոսկերիչյանը:

«Արարատ», 10 ապրիլի

Հունական կառավարության համաձայնությամբ Աթենքում հանդիսավորությամբ բացվել է 1915 թ. թուրքերի կողմից սպանված հայերի հիշատակին նվիրված հուշարձան: Բացմանը ներկա են եղել քաղաքապետը, ղանազան կուսակցությունների ներկայացուցիչներ, բազմահազար այլ մարդիկ:

«Արարատ», 5 մայիսի

«Ջարքոնք», 22 մայիսի

Ի Ր Ա Ք

Հ. Բ. Ը. Միության սրահում դեկտեմբերի 27-ին տեղի է ունեցել գրական երեկո՝ նվիրված խրիմյան Հայրիկին, Ղևոնդ Ալիշանին, Միքայել Նալբանդյանին և Դաբրիել Սունդուկյանին: Երեկոյին մասնակցել է մոտ 1000 մարդ:

«Ջարքոնք», 7 մարտի

Ի Ր Ա Ն

Սպահանի համալսարանի հայոց լեզվի և գրականության բաժնում ուսանում են 59 հայ ուսանողներ: Տեղի ճարտարապետական համալսարանում ևս կան հայ ուսանողներ: Այստեղ աշխատում են 7 հայ դասախոսներ:

«Ջարքոնք», 22 օգոստոսի

Թեհրանում մայիսի 24-ին լույս է տեսել նոր ստեղծված «Փյունիկ» շաբաթաթերթի առաջին համարը: Թերթի ուշադրության կենտրոնում են գտնվում իրանահայ համայնքի հոգսերն ու տագնապները, հայկական դպրոցներում մայրենի լեզվի և հայագիտական այլ առարկաների դասավանդումը բարելավելու, մարդական, մշակութային, երիտասարդական կազմակերպությունների աշխատանքը վերակառուցելու և այլ հարցեր:

«Փյունիկ» էջերում զգալի տեղ են գրավում հայրենիքի և սփյուռքի մասին պատմող նյու-

թերը: «Այսօր,— գրում է թերթը,— կարող ենք աշխարհի բոլոր զարգացած ժողովուրդների առաջ բաց ճակատով ներկայանալ, որովհետև մենք այլևս այն թշվառ, որը ու սոված ժողովուրդը չենք, որի մասին հիշատակվում էր անցյալում հրատարակված շատ հանրագիտարաններում»:

«Հայրենիքի ձայն», 29 օգոստոսի

ԹՈՒՐԳԻԱ

«Միլիթիթ» հանդեսը թուրքերեն առաջին գրքի տպագրության 250-ամյակի առթիվ հրատարակել է մի ուսումնասիրություն՝ Ճավիտ Օրհան Թյութենկիլի ստորագրությամբ: Հոգվածում հեղինակը հատկապես կանգ է առել այդ գործում «փոքրամասնությունների» կատարած դերի վրա: Ըստ նրա, Թուրքիայում առաջին տպարանը հիմնվել է Իսպանիայից գաղթած հրեաների կողմից: Այնուհետև, Սերաստացի Աբգար դպիրի ջանքերով Կ. Պոլսում 1567 թ. սկսում է գործել հայկական տպարանը: Հուլյները Ստամբուլում իրենց առաջին տպարանը հիմնել են 1627 թ., իսկ թուրքերը՝ 1727-ին:

«Արաբա», 21 փետրվարի

Պոլսում տեղի է ունեցել «Ժամանակ» թերթի 70-ամյակի հանդիսությունը, որին ներկա են եղել Շնորհք Պատրիարքը, պետական գործիչներ և հոծ բաղմունք: Ելույթներ են ունեցել «Մարմարայի» տնօրեն Ռուպեր Հատտեճյանը, Պոլսո լրագրողների միության ընդհանուր քարտուղարը և մի շարք այլ անձինք: «Ժամանակի» ընդհանուր տնօրեն Արա Դոշունյանի եզրափակիչ ելույթից հետո տեղի է ունեցել գեղարվեստական երեկո:

«Ջաբրոն», 21 ապրիլի

Լույս է տեսել Աֆիֆ Էրզենի «Արևելյան Անատոլուն և Ուրարտացիները» խորագրով գրքույկը անգլերեն: Առաջաբանում, որի հեղինակն է թուրք պատմագիտական ընկերության նախագահ Էնվեր Զիա Քարալը, գրված է. «Այս հակիրճ գործին նյութը ուրարտական քաղաքակրթությունն է, որ հիմնված է 2800 տարի առաջ Արևելյան Անատոլուի մեջ: Ուրարտացիները հուրրաններու (խուրրի) շարունակությունն են, որոնք հիմնեցին ամենեն սքանչելի քաղաքակրթություններն մեկը Քրիստոսի առաջ երկրորդ հազարամյակին հարավ-արևելյան Անատոլուի, հյուսիսային Սուրիո, հյուսիսային Միջագետքի, Հաթայի և Չաբուր օվայի դաշտը: Հուրրիաններու և ուրարտացիներու լեզուները կապականին դյուրահոգ լեզուներու, որոնց խմբին կապականի թրքերենը..., ապացուցած է, որ Ուրարտուի՝ պատմությունն անհետացու-

18 Հանդես, № 1

մին հաջորդող հազար տարիներու ընթացքին ոչ մեկ օտար կամ տարրեր մշակույթ հաստատված է Ուրարտացիներու երբեմնի երկրին մեջ... ան ցույց կուտա թե որքան գիտական հիմն զուրկ է կարգ մը շրջանակներու ուրարտական քաղաքակրթությունը յուրացնելու համար թափած ճիգերը»: Այս գրքի կապակցությամբ «Ջաբրոն» տպված է Կ. Ն. Փափազյանի «Խուրք «պատմագետին» համար Հայաստան գոյություն չունի» հոդվածը: Ամբողջ գրքում, նշում է Փափազյանը, Հայաստան բառը ոչ մի անգամ չի հիշված, իսկ «հայերեն» բառը գործածված է մեկ անգամ, այն էլ ասելու համար, որ ուրարտերենը ոչ մի կապ չունի հայերենի հետ:

«Ջաբրոն», 3 հունիսի

ՄԱՐՈՒԿՈ

Մայիսի 5-ին Ռաբաթում բացվել է Հայաստանի դեկորատիվ և կիրառական արվեստին նվիրված ժողովրդական ստեղծագործության ցուցահանդես, ուր ներկայացված են հարյուրից ավելի փայտափորագրություններ, գորգեր, մետաղադրվագումներ, ժանյակներ, նկարներ: Ցուցահանդեսը մեծ հետաքրքրություն է առաջացրել:

«Շարժում», 27 հունիսի

ԻՍՐԱՅԵԼ

Երուսաղեմի «Հիպրո» համալսարանի հայագիտական ամբիոնի դասախոս պրոֆ. Մայրլ Սթոն, ինչպես տեղեկացնում է «Շարժումը», «վերջերս պաշտոնապես հայտարարեց, թե մեծ թիվով հին հայկական արձանագրություններ գտնված են Սինայի լեռան ս. Կատարինս վանքի ուխտավորներու ճամփուն վրա: Այս արձանագրությունները փորագրված են հսկա ժայռաբեկորների վրա»: Պրոֆ. Սթոն և իր աշակերտը հայտնաբերել են մոտ քառասուն արձանագրություն, որոնցից մի քանիսը VI—VII դդ. են պատկանում:

«Շարժում», 30 մայիսի

ՖՐԱՆՍԻԱ

Ֆրանսիա—ՍՍՀՄ բարեկամության ընկերության՝ Ֆրանսիայում լույս տեսնող պատկերազարդ հանդեսը 1978 թ. նոյեմբերի իր համարը նվիրել է Սովետական Հայաստանին: Ամսագրի թղթակիցները եղել են Հայաստանում և ֆրանսիացի ընթերցողներին ծանոթացնում են Հայաստանի դարավոր պատմությանը, մշակույթին, գիտությանը, նկարագրում են այսօրվա Հայաստանը: Անտուան Ռուսեն, որ մեծ հարգանքով է խոսում հայ աշխատավորի մասին, գրում է. «Մշտազբաղ, բայց միշտ ժպտերես ըլլալը աշխատավոր Հայաստանի բնորոշ գիծն է: Այդ ձևով ան վրեժ կուժե իր դժբախտ ման-

կության այն ժամանակներու համար, երբ ան-
խոնջ կերպով կվազեր խաղաղության ետեկն»։
Հանդեսում զետեղված են Հայաստանի ճար-
տարապետական հուշարձանների, արդյունարե-
րական կառույցների և այլ լուսանկարներ։

«Պայքար», 10 հունվարի
«Արև», 19 փետրվարի

Մարտելում Գեղամ Սայապալյանի միջոցնե-
րով ստեղծվել է Հայագիտական ուսմանց
կենտրոն, որի կոչումը միայն մշակութային է։
Կենտրոնի նպատակներն են. ա) լինել հայկա-
կան մշակույթի համար հետազոտության, ուս-
ման, տեղեկատվության և փաստաթղթերի կենտ-
րոն. բ) նպաստել հայկական մշակույթը ու-
սումնասիրող կամ տարածող գործերի և պար-
բերականների հրատարակության. գ) բազմա-
մասկապի հայ և օտար գրականությունների
փոխանակությունը. դ) օգնել հայ հեղինակնե-
րին. ե) մրցանակ շնորհել այն գործերի հա-
մար, որոնք կրնազեն հայկական քաղաքա-
կրթության նպաստը համաշխարհային քաղա-
քակրթությանը.

«Ջարբոնք», 3 մարտի

Ֆրանսիական հնագիտական «Արքեոլոգիա»
հանդեսի այս տարվա առաջին համարը հիմ-
նականում նվիրված է միջնադարյան հայ ար-
վեստին։ Հանդեսը բացվում է արևելյան լեզու-
ների Փարիզի ազգային ինստիտուտի պրոֆե-
սոր Ժան Պիեր Մահենի «Հայոց պատմության
և մշակույթի մասին» ներածական ակնարկով։
Սորոնի համալսարանի արևելյան արվեստե-
րի խմբի ղեկավար Նիկոլ Թիերրին «Պատկեր-
ների պաշտամունքը» վերնագրով հոդվածում
լուսարանում է վաղ Հայաստանի պատկերա-
բանդակների յուրօրինակ արվեստը։ Ժան Մի-
շել Թիերրիի ուսումնասիրությունը նվիրված է
Սյունիքի միջնադարյան եկեղեցական ճակա-
տաքարերի քանդակազարդմանը։ Անիի ճար-
տարապետական հուշարձաններին է նվիրված
Պաուլ Կունենյի հոդվածը։ Սիրարիի Տեր-Ներ-
սեսյանը անդրադարձել է XIII դարի կլիկյան
մանրանկարչությանը։ Սովետահայ արվեստա-
դետ Զ. Հակոբյանը ծանոթացնում է միջնադար-
յան Հայաստանի մանրանկարչության վասպու-
րականի ինքնատիպ դպրոցին։ Հանդեսը պատ-
կերազարդ է։

«Նրևան», 9 մարտի

Ֆրանսիա—ՍՍՀՄ բնկերության նախաձեռնու-
թյամբ հայկական հին ձեռագրերի հարուստ
հավաքածուն երկու ամիս Հավրում ցուցադրվե-
լուց հետո ներկայացվել է Օդեսանում։ Ցուցա-
հանդեսի պաշտոնական բացումը տեղի է ունե-

ցել փետրվարի 22-ին։ Ֆրանսիական մամուլն
ու ռադիոն դրվատանքով են արտահայտվել հայ-
կական ձեռագրերի և ընդհանրապես հայ մշա-
կույթի մասին։ Օդեսանից հետո ցուցահանդեսը
պետք է տեղափոխվի Փարիզ։

«Աշխարհ», 24 մարտի

Արևելյան լեզուների և քաղաքակրթության
ֆրանսիական ազգային ինստիտուտի պրոֆե-
սոր Ժան Պիեր Մահենի Զ. Բ. Ը. Միության երի-
տասարդների կողմից հրավիրվել է Ալեք Մա-
նուկյան մշակութային կենտրոնի սրահում դա-
սախոսելու «Հայ գրականության մեծ հանգր-
վանները» թեմայով։ Դասախոսությունը տեղի
է ունեցել մարտի 10-ին։ Ժ. Պ. Մահեն հատ-
կապես անդրադարձել է հայ գրականության
մեծանուն հեղինակներին, վերլուծել Եղիշեի,
Կորյունի, Եղեիկի գործերը, համեմատել Նարե-
կացու և Շնորհալու պոեմները։ Այնուհետև
կանգ է առել արևելահայ և արևմտահայ գրա-
կանության վրա, ասելով, որ կա մեկ լեզու և
մեկ գրականություն։

«Աշխարհ», 31 մարտի
«Արև», 3 ապրիլի

Փարիզի Ֆրանսիա—ՍՍՀՄ բնկերության սը-
րահներում բացվել է ժամանակակից սովե-
տահայ գեղանկարչության ցուցահանդես, որտեղ
ներկայացված են Մինաս Ավետիսյանի, Հակոբ
Հակոբյանի, Մարտին Պետրոսյանի և այլոց
նկարները։ Ցուցահանդեսի բացման ժամանակ
արվեստարան է. լատոշը ասել է. «Հայ նկա-
րիչներու ժամանակակից ստեղծագործություն-
ները կշարունակեն Հայաստանի վառ և ինք-
նատիպ գեղանկարչության լավագույն ավան-
դույթները»։

«Նրևան», 20 ապրիլի
«Նոր կյանք», 29 հունիսի

Ֆրանսիական էՏՄԱ հրատարակատունը անց-
յալ տարի լույս է ընծայել «Ներկա աշխարհի
հանրագիտարան» շարքից «XX դարու եղելու-
թյունները» հատորը, որը հակիրճ կերպով անդ-
րադառնում է ներկա դարի կարևոր իրադար-
ձություններին։ Հատորում տեղ է գտել նաև
«Հայերի քարոզը» վերնագիրը կրող հոդվածը,
որը, ինչպես գրում է «Արևը», «Օտար փաս-
տաթուղթ մը ևս կավելցնե թուրքիո գործած
առաջին ցեղասպանությունը հաստատող»։ Թեր-
թում թարգմանարար տրված է այդ հոդվածը։

«Արև», 15 մայիսի

ԻՏԱԼԻԱ

Միլանի հայ մշակութային ուսումնասիրու-
թյանց կենտրոնը հրատարակել է իր միջոցա-

ոումների տեղեկագիրը, որի տվյալներով 1975—1978 թթ. ընթացքում իրագործվել է «Հայ ճարտարապետության վավերագրեր» շարքի 9-րդ պրակի հրատարակությունը՝ իտալերեն, անգլերեն և հայերեն:

1978 թ. հրատարակվել է նաև Բերգամոյի առաջին գիտաժողովի նյութերի հավաքածուն ս. Ղազարի տպարանում: Այս հրատարակության առթիվ տեղեկագիրը նշում է. «Տպագրական բացառիկ իրագործում մըն է այս հատորը՝ իր 1088 էջերով, 800-է ավելի լուսանկարներով ու գծաքանդակներով և տպագրական արվեստի բարձր որակով»:

«Հայ ճարտարապետության հետադոտություններ» շարքի պրակներից մեկը նվիրված է Պարսկաստանի հայ ճարտարապետական հուշարձանների ուսումնասիրությանը: Հրատարակչական աշխատանքից բացի Կենտրոնը կազմակերպչական գործունեություն է ծավալում՝ նպատակ ունենալով հայ մշակույթը ծանոթացնել օտարներին:

«Արարատ», 2 հունվարի

Միլանում հրատարակվել է արգի հայ երաժշտության շարքի Բ պրակը, որը պարունակում է ժամանակակից հայ երաժիշտ Լյուդվիգ Պազլիի ստեղծագործությունը՝ սրինգի համար: Միլանի արվեստագետների շրջանում այն արժանացել է բարձր գնահատականի:

Մատենաշարի ղեկավարն է Մինո Բորթինին:

«Արարատ», 24 մարտի

ԱՆԳԼԻԱ

Լոնդոնի «Մաշտոց» հրատարակչությունը 1978 թ. վերջերին լույս է ընծայել Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանների» նոր թարգմանությունը: Թարգմանիչն է Միշա Գյուտյանը:

«Գրական քերթ», 15 հունիսի

Հայկական գրքերի ղդալի հավաքածուների կան Բրիտանական թանգարանում, Օքսֆորդի Բոդլեյան, Դուբլինի Չեսթեր Բիթիի և Մանչեստրի Զոն Ռինալդի գրադարաններում:

Անցյալ տարվա հուլիսի 4-ից մինչև սեպտեմբեր Բրիտանական գրադարանում գործում էր «Քրիստոնեական Արևելքը» խորագրով ցուցահանգես: Այստեղ ներկայացված էին հունական, ասորական, եգիպտական, եթովպական, հայկական, վրացական ձեռագրեր և գեղարվեստական առարկաներ, որոնք վերցվել էին վերը հիշված գրադարաններից:

Ցուցահանգեսի 158 նմուշներից 27-ը հայկական են: Ցուցադրված ձեռագրերից հնագույն

օրինակը 1181 թ. Դրաղարկում Թորոս գրչի ընդօրինակած և հաշատուր քահանայի ծաղկած ավետարանն է: Իր գեղարվեստական ու պատմական առանձնահատկություններով բրիտանական գրադարանի ամենաուշագրավ մատյանն է համարվում Երզնկայի մոտ գտնվող Ավագ վանքում 1200—1201 թթ. վարդան գրչի գաղափարած ավետարանը:

Դուբլինի Չեսթեր Բիթի գրադարանից է բերվել կիլիկյան դրքարվեստի բացառիկ նմուշներից մեկը՝ Կոստանդին առաջին կաթողիկոսի (1221—1267) համար ընդօրինակված ավետարանը: Սարգիս Պիծակի արվեստը ներկայացված է Բրիտանական գրադարանի սեփականությունը կազմող Սաղմոսագրքով և Չեսթեր Բիթի գրադարանում պահվող ավետարանով նկարազարդված Սիսում 1329 թ.:

Բրիտանական գրադարանը լույս է ընծայել «Հայկական ձեռագրերի պատկերազարդումը» խորագրով 16 էջանոց մի գրքույկ, որի հեղինակն է Վ. Ներսիսյանը: Գրքույկին կցված է 12 դունավոր նկարներից բաղկացած հավելված:

«Արև», 27 հունիսի

Լոնդոնի «Փոլ էլեք» հրատարակչական տունը ապրիլին լույս է ընծայել արևելյան ժողովուրդների բանաստեղծությունների անգլերեն ժողովածու: Դիրքը միաժամանակ լույս է տեսել Լոնդոնում, Նյու Յորքում, Տոկիոյում և Սիդնեյում:

Հատորը բաղկացած է 300 էջից, հրատարակված է շքեղ: Այնտեղ ղեկավարված են 33 արևելյան ժողովուրդների գանձերը: Գրքի խմբագիրն է բանաստեղծ և թարգմանիչ Քիդ Պոզլին: Հայ գրականության բաժինը խմբագրել է Լոնդոնի պոլիտեխնիկի լեզուների բաժնի արևմտահայերենի դասախոս Կարպիս Եսայանը: Հատորում ներկայացված են Վահագնի ծնունդը, ընտիր նմուշներ Գրիգոր Նարեկացու, Քուչակի, Սիամանթոյի, Դանիել Վարուժանի, Վահան Թոթովենցի և Չարենցի ստեղծագործություններից: Ինչպես վկայում են թերթերը, Քիդ Պոզլին հայկական բաժնի ներածականը եզրափակում է այսպես. «Քիչ ազդեր կան հայության թվին չամեմատությամբ, որ այսքան կենսունակ գրականություն մը ունին և արվեստի այսքան նուրբ ու բարձր հասկացողություն»:

«Ջարթոնֆ», 24 մայիսի

«Նոր կյանք», 8 հունիսի

«Շարժում», 27 հունիսի

Լոնդոնի հայ երաժշտության ինստիտուտը, որ գլխավորում էր Լորիս Ծգնավորյանը, փակ-

վել է նյութական միջոցներ շունենալու պատճառով: Ինչպես հայտնում է թերթը, Ճգնափորյանի երկու կոշերը՝ նյութական նվիրատվությամբ անելու մասին հոգուտ ինստիտուտի հետագա գոյության, իրենց արդյունքը չեն տվել:

«Շարժում», 25 հուլիսի

ՇՎԵՒՆԱ

Ստոկհոլմի հայկական մշակութային միության անդամների թիվը հասել է 325-ի: Միության ղեկավարները աշխատում են կազմակերպել հետաքրքրական միջոցառումներ: Միությանն ունի նվազագույնը և ֆուտբոլի թիմ:

«Լոռ օր», 31 օգոստոսի

ԱՐԳԵՆՏԻՆԱ

«Նարժում» թերթի մեկ համարը ամբողջովին նվիրված է Արամ Խաչատրյանի հիշատակին: Նյութերը հրապարակված են հայերեն և իսպաներեն:

«Շարժում», 4 հուլիսի

Ա Մ Ն

1978 թ. նոյեմբերի 25—26-ին Նյու Յորքում տեղի է ունեցել ամերիկահայ գրողների անդրանիկ համագումարը, որին մասնակցել են մոտ հարյուր գրողներ, խմբագիրներ, թարգմանիչներ: Համագումարի պաշտոնական բացումը կատարել է «Հայ գրականության բարեկամներու միության» ատենապետ Վարդգես Գրիգորյանը:

Նիստերին կարդացվել են հետևյալ զեկուցումները.

1. Ամերիկահայ գրականության պատկերը,
2. Ամերիկահայ արձակն ու շափաժոն,
3. Ամերիկահայ գրական քննադատությունը,
4. Ամերիկահայ մամուլը: Ջեկուցողները կանգ են առել նաև Հայաստանի և Սփյուռքի գրական փոխհարաբերությունների, թարգմանական գրականության և այլ հարցերի վրա:

«Աշխարհ», 20 հունվարի

«Երիշըն սայննս մոնիթորին» 1978 թ. դեկտեմբերի 29-ի համարում լույս է տեսել Ալեքսանդր Քրիթլըս Էռմայի հոդվածը, որում նա խոսում է Մեծ եղեռնի, թուրքական պատասխանատվության և ռեֆրի հանդեպ համաշխարհային խղճմտանքի երկարատև լուծման մասին: Զարթոնքում հրապարակված է այդ հոդվածը՝ թարգմանաբար:

«Զարթոնք», 9 փետրվարի

«Զարթոնքին» Ռոստոնի թղթակիցը հայտնում է, որ լույս է տեսել «Հայ բանաստեղծության

ծաղկաբաղ» խորագրով մի հատոր լեզվաբաններն են անգլիագիր բանաստեղծուհի և Նյու Ինգլենդի բանաստեղծների ընկերակցության նախագահ՝ Տայանա Տեր-Հովհաննիսյանը և ղոկտ. Մարգարետ Մարկոսյանը): Երբքը բաղկացած է 360 էջից, պարունակում է 67 բանաստեղծների մոտ 285 թերթվածներ: Ժողովածուն ընդգրկում է անտունիներ, քրիստոնեական վաղ շրջանի հեղինակների գործեր, միջնադարյան բանաստեղծություններ, աշուղական երգեր և ժամանակակից սփյուռքահայ ու սովետահայ գրողների բանաստեղծություններ:

Հատորը, որ ունի առաջաբան և ծանոթագրություններ, հրատարակել է Կոլումբիայի համալսարանը:

«Զարթոնք», 9 փետրվարի

«Զարթոնքում» լույս է տեսել Շահնար. Աճեմյանի գրախոսականը Ա. Սանճյանի կազմած «Յուցակ միջնադարյան հայերեն ձեռագիրներու Ամերիկայի մեջ» գրքի վերաբերյալ:

Հատորում բերված են 180 ձեռագրեր, որոնք ցրված են ամերիկյան 13 նահանգների գրադարաններում և թանգարաններում: Հնագույնն է 966 թ. Ուոլթերդ Կալբրիի ավետարանը: Կաղմոգր խնամքով ներկայացրել է յուրաքանչյուր ձեռագիր, տվել է նրա վիճակը, հայերեն վերնագիրը և անգլերեն թարգմանությունը:

«Զարթոնք», 15 փետրվարի

Ամերիկահայ գրողների համագումարի իրականացման համար կազմված վարչությունը որոշել է ստեղծել ամերիկահայ գրողների միություն, մշակվել է ծրագիր-կանոնադրություն: Միաժամանակ որոշվել է համագումարին ներկայացված զեկուցումները տպագրել «Հայ գրականության բարեկամներու միության» պաշտոնաթերթ «Եր» ու գրքի» բացառիկ համարում, իրականացնել ամերիկահայ գրողներին նվիրված մի հատորի հրատարակությունը և այլն:

«Զարթոնք», 22 փետրվարի
«Աշխարհ», 3 մարտի,

Լույս է տեսել Արա Ս. Ավագյանի «Հայերը Ամերիկայի մեջ» խորագրով գիրքը (87 էջ)՝ բաղկացած չորս մասից: Առաջին մասում («Որո՞նք են հայերը») հեղինակն անդրադարձել է հայերի ծագմանը, լեզվին, պատմությանը, տպագրական ու կրթական գործին: Երկրորդ բաժնում («Հայերուն Ամերիկա գաղթը») հիշատակվում են 1620—1890 թթ. Ամերիկա եկող հայերը. երրորդ մասում («Հայերը Ամերիկայի մեջ այսօր») նշվում է Ամերիկայում

րնակություն հաստատած հայերի թվաքանակը: Հայերի թիվը կաղժում է. Հյուսիսային Ամերիկայում՝ 500.000, Կանադայում՝ 40.000, Կենտրոնական Ամերիկայում՝ 5.000: Հեղինակը այնուհետև անդրադառնում է արվեստի, գրականության և այլ հարցերի: Չորրորդ բաժնի խորագիրն է. «Բնչ է վերապահված ապագան»:

«Ջարթոնգ», 9—10 մարտի

Կալիֆորնիայի համալսարանում (Լոս Անջելոս) այս տարվա հունիսին կոմպոզիտոր և երաժշտագետ, դոկտ. Հրանտ Բեգլարյանի նախաձեռնությամբ հիմնվել է հայ երաժշտության ամբիոն: 200-ից ավելի մշակութասեր հայեր արձագանքել են համալսարանի փոխնախագահ, դոկտ. Ջոհնալ Գարրիելյանի և գեղարվեստից վարժարանի տնօրեն, դոկտ. Հրանտ Բեգլարյանի հրավերին՝ դորավիդ կանգնելու այդ նախաձեռնությանը: Ամբիոնի ստեղծման առթիվ կազմակերպված ընդունելության ժամանակ Հ. Բեգլարյանն իր ելույթում ասել է, որ մայր հայրենիքից և արտասահմանի մյուս երկրներից պիտի հրավիրվեն մասնագետներ, դասախոսներ, արվեստագետներ՝ դասախոսություններ կարգալու նպատակով: Պետք է կազմակերպվեն համերգներ և ցուցահանդեսներ: Կալիֆորնիայի համալսարանը ամերիկյան առաջին համալսարանն է լինելու, որտեղ պետք է պատրաստվեն հայ երաժշտության մասնագետներ:

«Նոր օր», 10 հուլիսի

Լոս-Անջելոսի համալսարանի հայագիտական ամբիոնի նախաձեռնությամբ մայիսի 26—27-ին տեղի է ունեցել նոր շրջանի հայ րանաստեղծներին նվիրված գիտաժողով, ուր տասր ընդարձակ զեկուցումներում ներկայացվել են Պետրոս Դուրյանի, Մկրտիչ Պեշիկթաշլյանի, Միսաք Մեծարենցի, Սիամանթոյի, Դանիել Վարուժանի, Վահան Թեքեյանի, Հովհաննես Թումանյանի, Վահան Տերյանի, Ավետիք Իսահակյանի և Եղիշև Չարենցի ստեղծագործությունները:

«Նոր օր», 1 հունիսի
«Ջարթոնգ», 7 հուլիսի

Անանուն բարերարի մեկ միլիոն դոլարի նվիրատվության շնորհիվ Կոլումբիայի համալսարանում հիմնվել է հայագիտական ուսման կենտրոն, որին աւրեթեր ստեղծվել է հայոց պատմությանը և մշակույթին նվիրված ամ-

բիոն: Հայագիտական կենտրոնի վարիչ է նշանակվել հայագետ Նինա Գարսոյանը: Համալսարանի ղեկավարությունը նշել է, որ նորաստեղծ կենտրոնի հիմնական նպատակը պետք է լինի՝ հայ ժողովրդի ազգային ժառանգությունը ծանոթացնել ամերիկյան հասարակությանը:

«Արև», 25 հուլիսի

Կալիֆորնիայում հիմնվել է «Նոր սերունդ» մշակութային միությունը: Նա իր մասնաճյուղերն ունի Հայնպում, Դամասկոսում, Կահիրեում, Ֆրանսիայում և Կանադայում: Վերջերս Աթենքում հիմնված Արաքս Մշակութային միությունը նույնպես անրաժան մասնիկն է այս միության:

«Շաբժում», 8 օգոստոսի

Նյու Յորքում հուլիսի 18-ին մահացել է ամերիկահայ ավագագույն մտավորական, բանասեր, իրանագետ և թարգմանիչ Միհրդատ Թրեաքյանը: 1919-ից ի վեր բնակվելով Նյու Յորքում, նա եռանդով մասնակցել է հայ մշակութային և գրական կյանքին:

«Ապագա», 25 օգոստոսի
«Ջարթոնգ», 26 օգոստոսի

ԿԱԿԱԿԱԿԱ

Հայոց բարեգործական ընկերության Օտտավայի մասնաճյուղը Կանադայի ազգային գրադարանում հունիսի 29-ին կազմակերպել է պրոֆ. դոկտ. էտմընտ Ֆ. Պլեյտոյի դասախոսությունը՝ «Ընանապարհորդություն պատմական Հայաստանով» թեմայով: Իր «Անատոլիոս քարե դարու արվեստը» գիրքը պատրաստելու համար նա 1976-ին ճամփորդել է Արևմտյան Հայաստանում. սկսելով Տրապիզոնից, եղել է Վասպուրականում, Մուշում, Կիլիկիայում: Դասախոսության ընթացքում պրոֆ. Պլեյտոն ցուցադրել է իր լուսանկարած գունավոր պատկերները: Ինչպես հայտնում է «Ապագան», «հարգելի դասախոսը հուզումով նկարագրեց պատմական հայկական հողերուն արդի ամայությունն ու անբերրի գոյավիճակը... Հայկական կիսավեր բազմաթիվ բերդերը, որոնք վեր կիսյանային այս վեհորեն տրամաթիթ բնության ծոցեն»։ Դասախոսության վերջում տեղի է ունեցել ընդունելություն ի պատիվ դոկտ. Պլեյտոյի:

«Ապագա», 25 օգոստոսի

Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ